

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

➤ **Տարվա բիզնես գործունեության արդյունքները**

Ենթակառուցվածքների զարգացում և տեխնոլոգիական արդիականացում

Ընկերությունը շարունակում է իր ուղղափառ և առաջնահերթություններից մեկը համարել ֆիքսված և շարժական կապի ենթակառուցվածքների զարգացումն ու արդիականացումը՝ ապահովելով կապի բարձր որակ, լայն ծածկույթ և ցանցի հուսալիությունն ամբողջ Հայաստանի տարածքում:

2025 թվականին իրականացվել է շուրջ 10 միլիարդ դրամ կապիտալ ներդրում, որի շրջանակում՝

- ամբողջությամբ արդիականացվել է Տավուշի մարզի բջջային ցանցը,
- ընդլայնվել է շարժական կապի ծածկույթը և բարելավվել կապի որակը, ինչպես նաև ընդլայնվել է FTTH ցանցի հասանելիությունը ՀՀ ամբողջ տարածքում
- ապահովվել է կապի հասանելիությունը Նախկինում սահմանափակ տարածքներում, ներառյալ Դիլիջանի թունելը,
- զգալիորեն աճել են բջջային ինտերնետի արագությունն ու ցանցի թողունակությունը:

Միաժամանակ շարունակվել է ֆիքսված ցանցի արդիականացումը՝ հիմնված Next Generation Network (NGN) տեխնոլոգիայի վրա, որը տարածաշրջանում եզակի է իր 25 Գբ/վ թողունակությամբ: 2025 թվականի վերջի դրությամբ այս ցանցը հասանելի է դարձել ավելի քան 415,000 տնային տնտեսության, ինչը նպաստում է բարձրորակ ինտերնետի տարածմանը և թվային ծառայությունների զարգացմանը:

Շարժական կապի ոլորտում Ընկերությունը շարունակել է 4G ցանցի ընդլայնումը և միաժամանակ ներդրել 5G տեխնոլոգիան, որը արդեն գործարկվել է Երևանում, Գյումրիում և Վանաձորում՝ ապահովելով հարյուր հազարից ավել օգտատերերի հասանելիությունը նոր սերնդի կապի ծառայություններին:

Նոր սերնդի ցանցի կառուցումն իրականացվում է միջազգային առաջատար տեխնոլոգիական մատակարարների հետ համագործակցությամբ, ինչը հնարավորություն է տալիս նաև իրականացնել հին տեխնոլոգիաների (2G) փուլային փոխարինում՝ բարձրացնելով ցանցի անվտանգությունն ու արդյունավետությունը:

Առաջիկա տարիներին Ընկերությունը նախատեսում է շարունակել բջջային ցանցի արդիականացումը Երևանում, մարզերում և միջպետական ճանապարհներին՝ ապահովելով անխափան կապ նաև շարժման ընթացքում:

Հաճախորդակենտրոն ուղղափառություն և փորձառության բարելավում

Ընկերությունը կենտրոնացած է հաճախորդների փորձառության շարունակական բարելավման վրա՝ զարգացնելով ինչպես ֆիզիկական, այնպես էլ թվային սպասարկման ալիքները:

ԿՑՎՈՒՄ Է 2025Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

Բաժանորդային բազայի զարգացումը խթանվել է ինչպես կոնվերգենտ ծառայությունների առաջարկով, որոնք համադրում են շարժական կապը, լայնաշերտ ինտերնետը, IPTV թվային հեռուստատեսությունը և ծայնային ծառայությունները՝ ապահովելով միասնական և հարմարավետ օգտագործման փորձառություն, այնպես էլ բջջային կապի սակագնային փաթեթների շարունակական բարելավմամբ և առաջխաղացմամբ:

Ընկերությունը նաև շարունակել է զարգացնել ինքնասպասարկման գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս հաճախորդներին ինքնուրույն և արագ կառավարել իրենց ծառայությունները՝ նվազեցնելով սպասարկման ժամանակը և բարձրացնելով ընդհանուր գոհունակությունը:

Ծառայությունների զարգացում և հասույթի աղբյուրների դիվերսիֆիկացում

Ընկերության ռազմավարական զարգացման կարևոր ուղղություններից է թվային ծառայությունների էկոհամակարգի ձևավորումը և ընդլայնումը, որը միավորում է հեռահաղորդակցության, էներգետիկայի և թվային բովանդակության ոլորտները:

Այս շրջանակում առանցքային դեր ունեն հետևյալ հարթակները՝

- **My Team**՝ որպես ինքնասպասարկման հիմնական թվային գործիք, որը ապահովում է ծառայությունների կառավարում, վճարումներ և հաճախորդների հետ հաղորդակցություն,
- **Team Energy**՝ որպես նորարար նախագիծ, որը նպաստում է էլեկտրական տրանսպորտի զարգացմանը. 2025 թվականի դրությամբ լիցքավորման կայանների թիվը գերազանցում է 130-ը,
- **TeamTV**՝ թվային հեռուստատեսության հարթակ, որը ապահովում է բազմաժանր բովանդակության հասանելիություն տարբեր սարքերով:

Այս ուղղությունը նպատակ ունի՝

- բարձրացնել հաճախորդների ներգրավվածությունը,
- ստեղծել լրացուցիչ արժեք,
- դիվերսիֆիկացնել եկամտի աղբյուրները և նվազեցնել կախվածությունը ավանդական հեռահաղորդակցության ծառայություններից:

Կառավարում, գործառնական արդյունավետություն և կայուն զարգացում

Ընկերությունը շարունակում է զարգացնել իր կառավարման համակարգերը՝ ապահովելով ֆինանսական կայունություն, գործառնական արդյունավետություն և համապատասխանություն միջազգային լավագույն չափանիշներին:

Ընկերությունում արդեն ներդրված են ISO/IEC 27001:2013 տեղեկատվական անվտանգության կառավարման և ISO 9001:2015 որակի կառավարման համակարգերը, իսկ 2025 թվականին մեկնարկվել է ISO 14001 բնապահպանական կառավարման համակարգի ներդրման գործընթացը՝ նպատակ ունենալով բարձրացնել ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

ԿՑՎՈՒՄ Է 2025Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

➤ **Բնապահպանական և սոցիալական ցուցանիշներ**

Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է ոչ միայն շրջակա միջավայրի, սոցիալական պատասխանատվության և աշխատանքային անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ ներպետական օրենսդրությամբ, այլև սկսած 2022 թվականից մշակել և ներդրել է ՎՋԵԲ և ՄՖԿ Կատարողական Ստանդարտներին համահունչ գործառնական համակարգ, որի ներքո գործում է հետևյալ փաստաթղթային շրջանակը՝

- Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների կառավարման քաղաքականություն
- Շրջակա Միջավայրի Պահպանության և Սոցիալական Կառավարման Պլան,
- ԲՍԿՀ Չննման ընթացակարգ և Ռիսկերի գրանցամատյան,
- Շահառուների Ներգրավման Պլան,
- Գեոդերային խտրականությունների բացառման քաղաքականություն,
- Սեռական ոտնձգությունների բացառման քաղաքականություն,
- Անչափահասների աշխատանքի կանխարգելման քաղաքականություն,
- Հարկադիր աշխատանքի բացառման քաղաքականություն,
- Ստահագությունների բարձրաձայնման Speak Up հարթակ (բողոքարկման մեխանիզմի և չհետապնդելու քաղաքականություն),
- Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլան:
- Համայնքների անվտանգության և առողջության պահպանման քաղաքականություն,
- Աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման քաղաքականություն և կառավարման պլան (ներառյալ ուսուցման, հետաքննությունների անցկացման կարգեր),
- Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման քաղաքականություն,
- Անվտանգության կառավարման պլան,
- Բիզնես գործընկերների Վարքագծի կանոնակարգ և Կոմպլայենսի դրույթներ,
- Բիզնես Գործընկերների Ստուգման ընթացակարգ,
- Կաշառակերության և կոռուպցիայի կանխարգելման քաղաքականություն,
- Աշխատավորների միությունների խրախուսման քաղաքականություն,

2025թ. ընթացքում մշակվել և ներդրվել են նաև հետևյալ ԲՍԿՀ ընթացակարգերը՝ հաշվի առնելով Ընկերության գործունեության ընդլայնումը, որոնց թվում՝

- Էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների և թափոնների կառավարման պլան
- ԶԳ արտանետումների կրճատման պլան (Շրջանակ 1,2 և Շրջանակ 3)
- Կլիմայական ռիսկերի կառավարման պլան

Միևնույն ժամանակ վերանայվել և փոփոխվել են Ընկերության այն ընթացակարգերը, որոնցում նշված տեխնիկական գործառնությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Ընկերության կայուն զարգացման վերաբերյալ հանձնառությունը նաև արտացոլված է Ընկերության պաշտոնական կայք էջում և հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.telecomarmenia.am/hy/sustainable-development/>

Վերոնշյալ փաստաթղթային շրջանակը վերանայվում և բարեփոխումների է ենթարկվում տարեկան կտրվածքով, իսկ ոլորտի խնդիրների բացահայտման կամ արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում նաև ըստ անհրաժեշտության:

ԿՑՎՈՒՄ Է 2025Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

➤ **Տարեկան բնապահպանական ցուցանիշների ամփոփ ներկայացում**

Կայուն զարգացումը՝ Ընկերության ռազմավարության մաս

Կայուն զարգացումը ենթադրում է բիզնեսի ընդլայնում և եկամտի աճ՝ միևնույն ժամանակ նվազեցնելով գործունեության ընդլայնման հետ կապված բացասական ազդեցությունը ու հոգալով այն միջավայրի մասին, որում աշխատում և արարում ենք:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի 2024թ.-ից որդեգրած ռազմավարական նպատակներից մեկը հենց կայուն զարգացումն է՝ հիմնված բնապահպանական և սոցիալական կառավարման սկզբունքների վրա:

Հաշվետու տարվա ընթացքում հիմնվելով բնապահպանական կառավարման համակարգի վրա, կարողացել ենք կրճատել մեր արտանետումները, ընկերության թափոնները վերածել երկրորդային հումքի և այդ ծախսերի կրճատման արդյունքում ապահովել դրական ազդեցություն շրջակա միջավայրի վրա՝ բիզնեսը ընդլայնելուն զուգահեռ:

➤ **Բնապահպանական և սոցիալական ամփոփ ցուցանիշներ**

Ի լրումն ՋԳ արտանետումների կրճատման, հարկ է նշել, որ մենք շարունակում ենք ներդնել էներգաարդյունավետ լուծումներ՝ կապի և հաղորդակցության էներգաապահովման համար օգտագործելով վերականգնվող էներգիա: Այսպես՝ 2025 թվականին ընկերության արևային կայանները 2024 թվականի նկատմամբ ավելացրել են իրենց արտադրանքը շուրջ 14%-ով, 2023-ի նկատմամբ՝ 77%-ով: Ընկերության ընդհանուր էներգասպառման մեջ վերականգնվող և զրոյական արտանետումներ էներգիայի մասնաբաժինն արդեն կազմում է 15,4%՝ յուրաքանչյուր տարի ապահովելով շարունակական աճ: Ընկերության ավտոպարկը շարունակաբար համալրվում է էլեկտրական մեքենաներով. անձայն շարժիչներով և զրոյական արտանետումներով մեքենաների մասնաբաժինն արդեն կազմում է շուրջ 28,9%:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի ռազմավարական ծրագրի՝ NGN ցանցի կառուցման արդյունքում պղնձե մալուխները փոխարինվում են օպտիկամանրաթելային ցանցով, ինչը էականորեն նվազեցնում է ածխածնի երկօքսիդի արտանետումները: Միայն 2025թ. ընթացքում Ընկերությունը պղնձե մալուխներից ստացել է 190,100 կգ պղինձ:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն պարբերական աշխատանքներ է իրականացնում նաև թափոնների կրճատման ուղղությամբ: Էլեկտրոնային թափոնների (e-waste) ստեղծումից խուսափելու համար ընկերությունը վերանորոգում և կրկնօգտագործում է կապի ապահովման սարքերը: Այսպիսով, 2025-ին ավելի քան 16 հազար հեռահաղորդակցության էլեկտրոնային սարք չի հայտնվել աղբավայրում, այլ վերանորոգվել, արդիականացվել և կրկնօգտագործվել՝ նախորդ տարվա համեմատ աճելով 28%-ով: Նախորդ տարվա համեմատ թղթի վերամշակման ծավալները նույնպես աճել են՝ 2024 թվականին վերամշակման է հանձնվել ավելի քան 6 տոննա թուղթ և ստվարաթղթե տուփ, իսկ 2025 թվականին այս թիվը հասել է 8.6 տոննայի: Թղթի թափոններ չկուտակելու համար «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի բոլոր մասնաճյուղերում հասանելի է eSIM ծառայությունը, և ներդրված է E-pon (էլեկտրոնային գրիչ) տեխնոլոգիան:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն շարունակելու է կայուն զարգացմանն ու բնության հանդեպ պատասխանատու վերաբերմունքի դրսևորմանն ուղղված իր ռազմավարությունը՝ ներդնելով նորարար տեխնոլոգիաներ, որոնք ապահովում են և՛ արդյունավետություն, և՛ շրջակա միջավայրի պաշտպանություն:

ԿՑՎՈՒՄ Է 2025թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

➤ **Բնապահպանական նախաձեռնություններ եւ իրազեկվածության բարձրացում**

2025թ. ընթացքում «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն միացել է բնապահպանական օրացույցի թվով երկու ամենակարևոր միջոցառումներին՝ ապրիլի 22-ին կատարվող Երկրի օրվան և հունիսի 5-ին կատարվող Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներին: Վերոնշյալ օրերին ԸՆկերության արտաքին և ներքին լսարանի համար կազմակերպվել են բնապահպանական իրազեկվածության բարձրացման ուղղված նախաձեռնություններ՝ հանրության ուշադրությունը սևեռելով Երկրի հիմնական բնապահպանական մարտահրավերներին և դրանց լուծման եղանակներին:

2025թ. Երկրի օրվա շրջանակում «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն մեկնարկեց և իրականացրեց կայուն զարգացման նախագիծ՝ ներգրավելով նաև իր բաժանորդներին: Ապրիլի 22-ին նախորդած շաբաթվա ընթացքում վաճառված յուրաքանչյուր սմարթֆոնի դիմաց ընկերությունը տնկեց 10 ծառ՝ հիմնելով 1 հեկտար անտառ Լոռու մարզի Բովաձոր համայնքում:

Անտառապատման աշխատանքները կատարվեցին ոլորտում բազմամյա փորձ ունեցող Արմենիա Թրի Փրոջեքթի (ATP) հետ համագործակցությամբ, որն իրականացնում է նաև անտառի հետագա խնամքն ու սպասարկումը:

Տարեկան սոցիալական ցուցանիշներ

➤ **Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանում**

Հաշվետու տարվա ընթացքում ընկերության աշխատակիցների շրջանում՝

- մահվան ելքով պատահարներ չեն գրանցվել
- արտադրական պատահարներ (ֆիզիկական վնասվածք, կոտորվածք, այլ) չեն գրանցվել:
- սննդով պայմանավորված թունավորումներ չեն գրանցվել
- համաճարակային իրավիճակներ չեն գրանցվել
- ԷՄԴ ճառագայթման դեպքեր չեն գրանցվել:
- Ընկերության ծառայողական մեքենաներով ավտոտրանսպորտային պատահարների թիվը նվազել է՝ 2024թ. 43-ի նկատմամբ 2025թ. կազմելով 30 ճՏՊ-ի:

Ստահոգությունների բարձրաձայնման Speak UP հարթակով ստացվել է թվով 4 բողոք տարբեր շահառուներից, որոնք դիտարկվել և քննարկվել են ըստ գործող ընթացակարգի և խնդիրներին տրվել են համապարփակ լուծումներ: Բողոքների կրկնման դեպքեր հաշվետու տարում չեն գրանցվել:

➤ **Վարվելակերպի կանոններ**

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն արժևորում է բաց, ազնիվ և թափանցիկ գործարար հարաբերություններն ու փոխադարձ վստահությունը բոլորի՝ հաճախորդների, աշխատակիցների, գործընկերների և բաժնետերերի հետ: Այդ մշակույթի պահպանումն ապահովելու նպատակով էլ Ընկերությունում ներդրված են կորպորատիվ էթիկայի և կոմպլայենսի միջազգային բարձրագույն ստանդարտներ:

Դրանք ամփոփված են մի շարք էթիկական ուղեցույցներում, որոնք հստակ նկարագրում են մեր գործունեության չափորոշիչները և ակնկալիքները: Մեր բարոյական սկզբունքները և վարվելակերպի ստանդարտները արտացոլված են Ընկերության «Վարվելակերպի կանոնակարգում», որը հանդիսանում է Ընկերության արժեքների հիմնարար ուղեցույցը: Մեր բոլոր աշխատակիցները՝ անկախ զբաղեցրած հաստիքից և պատասխանատվության

ԿՑՎՈՒՄ Է 2025Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

սահմաններից, ինչպես նաև բոլոր երրորդ անձինք, ովքեր հանդես են գալիս Ընկերության անունից, պարտավոր են հետևել Կանոնակարգի պահանջներին

Մարդկային կապիտալի զարգացում

Ընկերության երկարաժամկետ հաջողությունը պայմանավորված է նաև մարդկային կապիտալի զարգացմամբ:

2025 թվականին՝

- աշխատակիցների ներգրավվածության մակարդակը (eNPS) կազմել է 50.5%,
- իրականացվել են շարունակական ուսուցման և զարգացման ծրագրեր,
- զարգացվել է փոխհաջորդության համակարգը՝ ապահովելով կառավարման շարունակականություն:

Ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում ներառականությանը և հավասար հնարավորությունների ապահովմանը: Մենք վարում ենք զրո հանդուրժողականության քաղաքականություն ցանկացած տեսակի խտրականության և ոտնձգությունների նկատմամբ, ինչը հստակ ամրագրված է մեր ներքին համապատասխան ընթացակարգերում:

Այս մոտեցման շրջանակում մենք պարբերաբար գնահատում և վերլուծում ենք նաև աշխատակազմի գեներացիան կազմը, ինչպես նաև խթանում ենք բազմազան և ներառական աշխատանքային միջավայր:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն հանդես է գալիս որպես ներառական գործատու՝ ապահովելով հավասար վերաբերմունք և հնարավորություններ բոլոր աշխատակիցների համար՝ անկախ որևէ տարբերակիչ հատկանիշից

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ի աշխատակազմի գեներացիան բաշխումը՝

Ընդհանուր աշխատակիցների քանակ	Կին աշխատակիցներ
1937	814

Ընկերությունը շարունակելու է ձևավորել բարձր արդյունավետություն ունեցող, համագործակցային և նորարարական թիմային մշակույթ, որտեղ յուրաքանչյուր աշխատակից ունի զարգացման և առաջխաղացման հնարավորություն:

ԿՑՎՈՒՄ Է 2025թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

➤ **Գործունեության հիմնական ցուցանիշներ**

Շարժական կապ

Ընկերության շարժական կապի բաժանորդների թիվը 2025թ.-ին կազմել է 1,047,732 բաժանորդ: Մասնավորապես, զգալիորեն աճել է հեռախոսի միջոցով շարժական ինտերնետ օգտագործող բաժանորդների թիվը՝ 808,885: 2024 թ.-ի համեմատ արձանագրվել է աճ 21%-ով:

2025 թ.-ի տվյալների համաձայն ընկերությանը բաժին է ընկնում ՀՀ շարժական կապի շուկայի բաժանորդների 25%-ը:

2025թ.-ին շարժական կապի ծառայությունների մատուցումից և սարքավորումների իրացումից ստացված եկամուտները 2024 թ.-ի համեմատ աճել են 6%-ով և կազմել 20.9 մլրդ դրամ: «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին 2025թ.-ին բաժին է ընկել ՀՀ շարժական կապի շուկայի եկամուտների 20.9%, գրանցելով տարեկան աճ 0.1 տոկոսային կետով:

Ընկերության 4G ցանցի բաժանորդների քանակը ցուցաբերում է կայուն աճ, տեխնոլոգիական առանձնահատկությունից ելնելով, ավելի համեստ աճի տեմպեր է ցուցաբերում 3G ցանցի բաժանորդների քանակը: 2G ցանցի բաժանորդների քանակը, պայմանավորված ժամանակակից տեղեկացվածությամբ, գնալով նվազում է: Ստորև աղյուսակով ներկայացված է տարբեր տարիներին տարեվերջի դրությամբ Ընկերության շարժական կապի բաժանորդների քանակը.

	2020	2021	2022	2023	2024	2025
շարժական կապի բաժանորդներ, որից	904,689	915,534	958,293	1,044,939	1,051,679	1,047,732
<i>մասնաբաժինը բնակչության թվաքանակից</i>	31.0%	31.0%	32.0%	35.1%	35.1%	34.0%
կանխավճարային բաժանորդներ	784,133	777,573	787,261	856,918	830,175	781,634
հետվճարային բաժանորդներ	120,556	137,961	171,032	188,021	222,854	266,098

Շարժական ինտերնետից (տվյալների հաղորդման ծառայություններից) օգտվող բաժանորդների քանակը վերջին տարիներին կայուն աճել է՝ հասնելով ընդհանուր բաժանորդների թվի 86.3%-ին: Ստորև աղյուսակով ներկայացված է շարժական ինտերնետի բաժանորդների քանակի դինամիկան ըստ տարիների.

	2020	2021	2022	2023	2024	2025
շարժական ինտերնետ բաժանորդներ, որից	557,966	618,206	671,960	743,296	783,818	904,214
<i>մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում</i>	61.7%	67.5%	70.1%	71.1%	74.5%	86.3%
բացառությամբ հեռախոսասարքի միջոցով օգտվողների	55,531	59,284	79,314	82,565	114,956	95,329
հեռախոսասարքի միջոցով օգտվողների	502,435	558,922	592,646	660,731	668,862	808,885

Ընկերությունը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, 2025թ.-ին ևս շարունակեց տրամադրել իր բաժանորդներին որակյալ կապ, առաջարկելով հարմարավետ փաթեթներ և ծառայություններ: Հիմնական առաջարկները ուղղված էին համակցված փաթեթների օգտագործողների քանակի ներթափանցելիության աճին և առաջխաղացմանը, շարժական ինտերնետի որակյալ ծառայությունների մատուցմանը ներառյալ ոռումինգ ծառայություններ:

Առաջինը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում Ընկերությունը 2023թ.-ին գործարկեց նորարարական Team Energy նախագիծը, որտեղ հատվում են հեռահաղորդակցությունը, էներգետիկան և էկոլոգիան: Այս նախագիծը հնարավորություն է տալիս խթանել և հեշտացնել էլեկտրական մեքենաների օգտագործումը Հայաստանում՝ զգալիորեն կրճատելով օդի աղտոտվածությունը և տրանսպորտային ծախսերը: Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանցն արդեն հասանելի է ՀՀ ողջ տարածքում: Իսկ Team Energy հավելվածի միջոցով հնարավոր է գտնել մոտակա լիցքավորման կետերը, կատարել լիցքավորում և վճարել բանկային քարտի միջոցով, իսկ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ բաժանորդ

ԿՑՎՈՒՄ Է 2025թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

լինելու դեպքում՝ նաև Team-ի հեռախոսահամարի հաշվեկշռից: 2025թ.-ին շարունակվեց Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանցի ընդլայնումը և բարելավումը:

➤ **Ռադիոհաճախականային սպեկտրի օգտագործում**

Ընկերության տեխնոլոգիական առաջընթացը հիմնված է արդյունավետ հաճախականային կառավարման վրա, որն ապահովում է ծառայությունների անխափան որակը և ծածկույթի լայնությունը:

- Հաճախականային տիրույթներ. Ընկերությունն օգտագործում է սպեկտրի լայն շրջանակ՝ սկսած ցածր հաճախականություններից (800 ՄՀց), որոնք ապահովում են տարածական մեծ ծածկույթ, մինչև բարձր հաճախականություններ (2600 ՄՀց և 3500-3800 ՄՀց), որոնք անհրաժեշտ են տվյալների գերարագ փոխանցման և 5G ցանցի համար:
- Թողունակություն. Ընդհանուր օգտագործվող սպեկտրը կազմում է 350 ՄՀց (ներառյալ DL և UL ուղղությունները), ինչը թույլ է տալիս սպասարկել աճող տվյալների հոսքերը:

➤ **Ամրակցված կապի ենթակառուցվածք (FTTH)**

- Հասանելիություն. ՀՀ-ում առկա են 849,126 տնային տնտեսություն:
- FTTH ծածկույթ. Օպտիկամանրաթելային հասանելիություն ունի 415,628 տնային տնտեսություն (հանրապետական ծածկույթը՝ 48.9%):
- Մարզային առաջատարներ. Սյունիք (77.1%), Վայոց ձոր (68.5%) և Գեղարքունիք (66.7%):
- Բաժանորդների միգրացիա. FTTH տեխնոլոգիայից օգտվող բաժանորդների քանակը՝ 45,666: Ընկերությունը նպատակաուղղված է 273,599 PSTN/xDSL/FTTB բաժանորդների աստիճանական փոխարկմանը դեպի օպտիկական ծառայություններ:

➤ **3. Բջջային ցանցի զարգացում**

- Բազային կայաններ. Շահագործվում է 945 կայան:
- Տեխնոլոգիական հագեցվածություն. Կայանների 92.6%-ը (875 կայան) ապահովում է 4G+ կապ:
- 5G նորարարություն. Ընկերության բբջային ցանցի 253 կայանները ապահովում են 5G ծածկույթ:
- Ծածկույթ. 4G ցանցն ապահովում է բնակչության 91.5% ընդգրկվածություն:

Ամփոփիչ KPI ցուցանիշներ

Ցուցանիշ	Արժեք
Ընդհանուր հաճախականային սպեկտր	350 ՄՀց
FTTH հանրապետական ծածկույթ	48.95%
Բջջային բազային կայանների քանակ	945
5G-ready կայանների քանակ	253
Օպտիկամանրաթելային բաժանորդներ	45,666

ԿՑՎՈՒՄ Է 2025թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

➤ **Էական դատական գործերի վերաբերյալ տեղեկատվություն**

1. 2022թ.-ի ապրիլին «Խասուրո Գրուպ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ՝ Արմինե Մովսիսյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Ընկերության 1,170,000,000 ՀՀ դրամ բաց թողնված օգուտի տեսքով պատճառված վնասի հատուցման պահանջով (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/17676/02/22): Նշված գումարի չափով վնասն, ըստ հայցվորի, գոյացել է Ընկերության կողմից «Խասուրո Գրուպ» ՓԲԸ-ի թվով մեկ և Արթուր Խաչատրյանի օգտագործմանը հանձնված թվով 4 ֆիքսված կապի հեռախոսահամարները Ընկերության կողմից ենթադրաբար ապօրինի անվանափոխելը, ինչի պատճառով «Խասուրո Գրուպ» ՓԲԸ 2016-2021թթ. ընթացքում չի կարողացել տևտեսական գործունեություն իրականացնել (ուղևորափոխադրման տաքսի ծառայություններ մատուցել)՝ կրելով 1,170,000,000 ՀՀ դրամի չափով վնաս:

Քաղաքացիական գործի քննությունն ավարտվել է հոգուտ Ընկերության. «Խասուրո Գրուպ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ՝ Արմինե Մովսիսյանը հայցն ամբողջությամբ մերժվել է, իսկ դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ 30.01.2026թ. -ին՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «Խասուրո Գրուպ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ՝ Արմինե Մովսիսյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մերժելու մասին որոշման ուժով:

2. 2020թ.-ի հուլիսին «Յուրոն» ՓԲ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Թիմ» ՓԲԸ-ի, երրորդ անձիք՝ «Վեոն Ամստերդամ Բ.Վ. մասնավոր» ՍՊ ընկերության, «Վիմպելկոմունիկացի» ՀԲ ընկերության, Հայկ Եսայանի, Ալեքսանդր Եսայանի՝ «Թիմ» ՓԲԸ կողմից «Վեոն Արմենիա» ՓԲԸ բաժնետոմսերի ձեռքբերման բանակցային գործընթացում «Յուրոն» ՓԲ ընկերությանը պատկանող չբացահայտված տեղեկատվության առկա պայմաններում օգտագործումը և «Թիմ» ՓԲԸ հիմնադիրների կողմից «Յուրոն» ՓԲ ընկերության հանդեպ ունեցած ֆիդուցիար պարտավորությունների խախտումն անբարեխիղճ մրցակցություն հանդիսանալու, «Թիմ» ՓԲԸ կողմից «Վեոն Արմենիա» ՓԲ ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման 29.10.2020 թվականի գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/20890/02/20):

Նշված քաղաքացիական գործը գտնվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում՝ նախնական քննության փուլում:

Ծանոթություն.

Սույն հաշվետվության մեջ նշված թիվ 2 գործը քննվում է դոկիակ դատական նիստում և դրա վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը սահմանափակված է օրենքով: Հրապարակման ենթակա են բացառապես դատական ակտերի (վճիռների) եզրափակիչ մասերը:

ԿՑՎՈՒՄ Է 2025թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իմ լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

Հայկ Եսայան

Գլխավոր տնօրեն
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
Մայիս 2, 2026թ.

